

**ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ՄԱՐԳԱՐՅԱՆ Մ. Գ.

Համընդհանրացման գործընթացում ազգային անվտանգության ապահովման և կայուն զարգացման հրամայականը մարտահրավեր է նետել «նոր ժողովրդավարներին»՝ ստիպելով նրանց քաղաքական ժամանակի և տարածության մեջ հարահոս փոփոխությունների ենթարկվել՝ արդիականացնելով ազգային շահերը: ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրները մշակել են անվտանգության քաղաքականությանն առնչվող նոր քաղաքական փաստաթղթեր<sup>1</sup>, որտեղ ներկայացված են ազգային շահերի ինստիտուցիոնալացման և դրանց իրականացման ձևաչափերը, ինչպես նաև հանրային զարգացման ապագայի տեսլականը:

ՀՀ Նախագահի հրամանագրով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը», ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքներն են՝

- Անկախություն. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

- Պետության և ժողովրդի պաշտպանություն. Հայաստանի Հանրապետությունը ապահովում է իր տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը, բնակչության ֆիզիկական գոյությունը:

- Խաղաղություն և միջազգային համագործակցություն. Հայաստանի Հանրապետությունը ձգտում է իր միջազգային ներգրավվածության աստիճանի բարձրացմանը, նպաստում տարածաշրջանում և աշխարհում խաղաղության ու անվտանգության ապահովմանը:

- Հայապահպանություն. Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանմանն ու զարգացմանը՝ հայրենիքում և Սփյուռքում:

- Բարեկեցություն. Հայաստանի Հանրապետությունը ձգտում է կայուն զարգացման միջոցով բնակչության համար ապահովել կյանքի բարձր որակ<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Հարկ է նշել, որ այդ փաստաթղթերը իրենց բազմազանության մեջ և կարևորությամբ երկրորդն են Մահմանադրությունից հետո: Որոշ երկրներում դրանք ընդունվել են որպես հայեցակարգ (Մոլդովա, Լատվիա, ՌԴ, Էստոնիա), մյուսներում՝ ռազմավարություն (Բուլղարիա, Լեհաստան, Լիտվա): 2005-2007 թթ. Վրաստանը (2005) և Ադրբեյջանը (2007) ընդունեցին որպես հայեցակարգ, իսկ ՀՀ-ն (2007)՝ ռազմավարություն: Նշված փաստաթղթերը գործունեության միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր են, որոնք կոչված են համագործակցության հիմքի վրա անվտանգության քաղաքականություն իրականացնելու Հարավային Կովկասի հանրապետությունների կայուն զարգացման համար:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»-ը:

Պետության հիմնարար ռազմավարական և մարտավարական շահերը դինամիկ են, փոփոխական, միջազգային իրավիճակով պայմանավորված: Այսպես, «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում» նշված է՝ «Հայաստանի Հանրապետության ռազմավարությունը ենթակա է ճշգրտումների՝ ըստ ներպետական և միջազգային իրադրության, սպառնալիքների ու մարտահրավերների փոփոխման, ինչպես նաև ըստ սույն փաստաթղթում նշված նպատակների իրականացման»<sup>3</sup>: Ազգային անվտանգության շարժը և արձագանքման ճկուն համակարգը կոչված են ընդլայնելու, մեծացնելու, ամրապնդելու հիմնարար ազգային շահերը: Քաղաքականությունը սկսվում է այն ժամանակ, երբ շահը կերպարվում է նպատակի: Շահի և նպատակի ընդհանրացնող գործոնն այն է, որ երկուսն էլ արտահայտում են հասարակական պահանջումները, ակնկալիքները և պատկերացումները: Տարբերությունը հետևյալն է. շահը գիտակցվում է, իսկ նպատակը ենթադրում է հասարակության և պետության ինստիտուցիոնալ մեխանիզմների միջոցով գործողությունների իրականացում:

Շահը գիտակցված պահանջումների համար նպատակադրված գործողությունների և հարաբերությունների ամբողջություն է:

Մշխարհաքաղաքական զարգացումների վերաիմաստավորման այս գործընթացում գրեթե անհնար է միասնական ձևաչափի մեջ դիտարկել ազգային շահերի արդիականացումը, քանի որ ազգային անվտանգության ապահովումն ունի սոցիո և էթնոլոգիայի առանձնահատկություններ: Այդ իսկ պատճառով գիտական գրականության մեջ առկա են շահի ծագումնաբանության բացահայտման մի շարք մոտեցումներ, ըստ որոնց՝

- շահը հասարակության մեջ դերակատարների սոցիալական կարգավիճակի կամ նրանց կապերի ամբողջությունն է.
- շահը դերակատարների կողմից գիտակցված անվտանգության քաղաքականության գերակայությունն է.
- շահը որոշակի գործողությունների ամբողջություն է, որը նպատակաուղղված է դերակատարների պահանջումների բավարարմանը: Այսպիսով, շահը քաղաքականության տարաբնույթ դերակատարների պահանջումների բավարարման միջոց է: Պայմանավորված գործունեության ոլորտներով և պահանջումներով՝ շահերի բազմաբնույթ համակարգում առանձնահատուկ տեղ ունի ազգային շահը<sup>4</sup>:

Համընդհանրացման գործընթացներով պայմանավորված՝ ազգային անվտանգության ապահովմանը նվիրված գրականության մեջ «ազգային շահ (national interest)» հասկացությունը նույնականացվում է «պետական շահի» հետ: Որպես ազգ-պետության գաղափարախոս՝ Ն. Մաքիավելլին «Տիրակալ»-ում դիտարկում է «ազգային-պետական շահ» հասկացությունը (իտալ.- *ragion di Stato*)՝ որպես պետության բարեկեցությունն ապահովող գերագույն արժեք<sup>5</sup>:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>4</sup> **Алексеева Т. А.** Рациональный эгоизм национального интереса (Материалы круглого стола) (Политические исследования (ПОЛИС), 1995, N 1, с. 92).

<sup>5</sup> **Մաքիավելլի Ն.**, Տիրակալը, Ե., 2010, էջ 200:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո «ազգային շահ» հասկացությունը նախ սկսեցին քննարկել «քաղաքական ռեալիզմի» դպրոցի ներկայացուցիչները: Նրանք դա ռազմավարական անվտանգության ապահովման տեսանկյունից դիտարկում էին միջազգային հարաբերություններում պետության հզորության և «իշխանության ուժի» հասկացությունների հետ: Այդ առումով որոշիչ է քաղաքական ռեալիզմի դպրոցի ներկայացուցիչ Գ. Մորգենթաուի կարծիքը. ազգային շահը պետությունների միջև փոխներգործության շարժիչ ուժն է և պետության հզորության ցուցանիշը այլոց հետ հարաբերվելիս:

Համաձայն Գ. Մորգենթաուի տեսության՝ ազգային շահերի համակարգն ունի աստիճանակարգված կառուցվածք և դասակարգվում է ըստ

- ոլորտների՝ քաղաքական, տնտեսական, ռազմական, գաղափարախոսական, մշակութային, տեղեկատվական.

- ժամանակի մեջ կայունության ապահովման չափի՝ անմիջական (մինչև 1 տարի), կարճաժամկետ (1-5 տարի), միջնաժամկետ (5-20 տարի), երկարաժամկետ (20-50 տարի), հեռավոր ապագա (50 տարի անց).

- պետության և հասարակության համար կարևորության աստիճանի և աշխարհաքաղաքական ուղղվածության:

Ըստ Գ. Մորգենթաուի մշակած բանաձևի՝ «Արտաքին քաղաքականության նպատակները պետք է որոշվեն ազգային շահերի համատեքստում և պաշտպանվեն պետության կողմից: Կարելի է վստահորեն ասել, որ եթե արտաքին քաղաքականությունն ուղղորդվում է բարոյական նորմերով և հետին պլան է մղում ազգային շահերը, ապա ժամանակակից միջազգային հարաբերությունների պայմաններում ակնհայտ են դառնում ազգային ինքնասպանության քաղաքականության դրսևորումները»<sup>6</sup>: Փաստորեն, «ազգային շահ» հասկացության արժեքային բազմաչափությունը հասարակության գիտակցված, պաշտոնապես արտահայտված օբյեկտիվ պահանջումն է, որը, հիմնվելով ազգային արժեքների վրա, միտված է հասարակության և պետության անվտանգության ապահովմանը:

Ազգային շահը պայմանավորված է նաև տվյալ հասարակության և պետության մեջ առկա գերիշխող արժեքային համակարգով ու աշխարհի հանդեպ ունեցած պատկերացումներով: Ինչպես նշում է Ջ. Ռոզենաուն, «ազգային շահերը բնորոշվում են որպես քաղաքականության վերլուծական և արժեքային հիմքի վրա եզրահանգումների համակարգ»<sup>7</sup>: Առանձնացնենք որոշակի փոփոխականներ, որոնք արդիականացնում են «ազգային շահը» և թույլ տալիս իրականացնելու պետական անվտանգության ապահովման քաղաքականություն՝ համագործակցության և համախմբման հիմքի վրա: Այս պարագայում անհրաժեշտ է «ազգային շահը»

<sup>6</sup> Morgentau H. *Politics among Nations. The Struggle for Power and Peace*, N. Y., 1949, p. 440; *Contemporary Theory in International Relations*. Prentice Hall, 1969, p. 78.

<sup>7</sup> Rosenau J. *National Interest (International Encyclopaedia of the Social Sciences)*, N. Y., 1968, vol. XI, p. 37).

զուգամիտել «պետական շահին»՝ պետությունը համարելով ազգային շահը ներկայացնող գերակա ինստիտուտ: Քանի որ քաղաքական համակարգի և ոչ մի ինստիտուտ, չունենալով գերիշխանության իրավունք, ի վիճակի չէ իրականացնել, արդիականացնել և պաշտպանել հանրային շահերն ամբողջությամբ, ուստի հենց պետությունն էլ հանդես է գալիս իբրև ազգային պետական շահերի արտահայտման գլխավոր ինստիտուտ<sup>8</sup>:

Ազգային շահերը, որպես պետության հզորության անվտանգության ապահովման գիտակցված պահանջմունքներ, բնորոշվում են՝

• տվյալ դարաշրջանում պետության տնտեսական և աշխարհաքաղաքական հարաբերություններով.

• պատմամշակութային ավանդույթներով.

• անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ.

• բնակչությանը արտաքին և ներքին սպառնալիքներից պաշտպանությամբ.

• էկոլոգիական աղետներով և այլն:

Այս մտեցումն արդարացվում է ազգային շահերը հաճախ տարբեր ձևաչափերով ներկայացնելիս՝ «ռուսական գաղափար», «ամերիկյան երազանք», «հայկական աշխարհ»<sup>9</sup> և այլն:

Փաստորեն, ազգային շահը ոչ բացարձակ, ոչ էլ տրված մեծություն է, և որպես այդպիսին՝ նրա կրողները միշտ փոխում են հնարավոր «դաշնակիցներին» և «հակառակորդներին»՝ պայմանավորված ազգային անվտանգության դեմ ուղղված ներքին և արտաքին սպառնալիքներով: Այս գործընթացում էլ միշտ գերակա է երկու հիմնական նպատակ՝ քաղաքացիների անվտանգության ապահովում և պետության հզորության արդիականացում, որոնք էլ պետական իշխանության մշակված անվտանգության համագործակցային քաղաքականության իրականացման կարևորագույն կողմնորոշիչներն են: Նմանօրինակ մտեցմամբ էլ ռուս քաղաքագետ Ա. Սոլովյովը «ազգային շահը» համարում է մարդկանց համար ազգային և մշակութային նույնականացման ձևավորման անհրաժեշտ պայմաններից մեկը<sup>10</sup>, որոնք համակարգում են՝

• հասարակական կարծիքի կամ տվյալ երկրի քաղաքական և տնտեսական էլիտաների դիրքորոշումը.

• երկրի մշակութային ավանդույթների, կրոնադավանաբանական կամ աշխարհաքաղաքական, ինչպես նաև այլ արժեքների հիմքի վրա արդիականացող երկրի դերը համաշխարհային պատմության մեջ.

• պետության ռազմավարական դիրքերի ամրապնդման գործընթացը՝ նպաստելով ազգային անվտանգության ապահովմանը և կայուն զարգացմանը:

<sup>8</sup> Межуев Б. В. Современные интерпретации “национального интереса” (ПОЛИС, 1997, N 1, с. 21).

<sup>9</sup> Մարգարյան Տ., Հայկական աշխարհ, <http://www.gov.am/files/docs/193.pdf>

<sup>10</sup> Соловьев А. И. Политология: политическая теория, политические технологии, М., 2000, с. 126.

Որպես այդպիսին՝ ազգային շահերի արդիականացման գործընթացը ներառում է այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են գաղափարական բազմակարծությունը, համակարգվածությունը, համագործակցությունը, ինտեգրվածությունը և պատմականությունը:

Նշվածները իրենց համակարգային բնույթով ներառում են տարբեր դերակատարներ, սոցիալական ցանցեր, ազդեցության միջավայրեր և նպատակադրման մոդուլներ, արժեքային կողմնորոշիչներ, նորմատիվային կարգավորիչներ, գիտելիքներ և հույզեր, ինստիտուցիոնալացման գործընթացներ, հաղորդակցական տիպեր և այլն<sup>11</sup>:

Վերջիններիս գործունեության ծիրում էլ ազգային շահերը դասակարգվում են ըստ կենսական անհրաժեշտության, համագործակցության անվտանգության ապահովման և արդիականացման ռազմավարության: Քաղաքական կայունության նկատառումներով նպատակահարմար է դիտարկել ազգային շահերի իրականացման պատասխանատվության բաշխումն ըստ պետական իշխանության ճյուղերի, գործարարության, կուսակցությունների, շահերի խմբերի և այլ սոցիալական միավորումների միջև: Ելնելով առկա մարտահրավերներից՝ համագործակցային անվտանգության քաղաքականության իրականացումը անհրաժեշտ է դիտարկել քաղաքական համակարգի տարբեր ինստիտուտների կողմից ազգային շահի արդիականացման գիտակցության անհրա-ժեշտությամբ: Հետևաբար ազգային շահերն ունեն համակարգային բնույթ և որպես շահադրող գործոն՝ կիրառական քաղաքական բովանդակություն:

Այդ առումով ուշագրավ է Դ. Կոլինզի հետևյալ կարծիքը. «Ազգային անվտանգությունը երկրի կամ երկրների կոալիցիաների կողմից ընդունվող և իրականացվող միջոցներն են պաշտպանվելու ամեն տեսակի արտաքին և ներքին անբարենպաստ պայմաններից»<sup>12</sup>:

Իրենց սոցիալ-տնտեսական, մշակութային, աշխարհաքաղաքական և այլ օբյեկտիվ հիմքերով ազգային շահերը պետք է լինեն որոշակի կերպով շրջանառված (*articulation*) և գեներացված (*generation*): Դրանց շրջանառման գործընթացի վրա ազդում են հասարակական կարծիքը, իշխանության իրականացման մշակույթը (մենախոսություն, երկխոսություն), ազգային անվտանգության ապահովման արժեքային կողմնորոշիչները, ՋԼՄ-ում քաղաքական դերակատարների առաջադրած ծրագրերի քննարկումը:

Հենց այս ժամանակ էլ առաջ է գալիս ստացվող, պահպանվող և փոխանցվող տեղեկատվության նկատմամբ ունեցած վարքի դրսևորման հնարավորությունների բացահայտման անհրաժեշտություն: Այս առումով էլ շահերի խմբերը

<sup>11</sup> Дегтярев А. А. Теория принятия политических решений в структуре социальных и управленческих дисциплин (ПОЛИС, 2002, N 2, с. 120-121).

<sup>12</sup> Collins J. M. U.S. Defence Planning. A Critique. Boulder, Colorado, 1982, p. 309.

ինքնակազմակերպվող, ինքնակառավարվող և ինքնաիրացվող քաղաքական համակարգերի հարաբերականորեն անկախ տեղեկատվական ենթահամակարգեր են: Ելնելով քաղաքական տարածության և ժամանակի մեջ քննարկվող անվտանգության քաղաքականության բազմակողմանի ուսումնասիրման անհրաժեշտությունից՝ նպատակահարմար ենք համարում համակարգերի ընդհանուր սիներգետիկական տեսությունից փոխառել «էներգիայի մեծ լարում»<sup>13</sup> հասկացությունը: Դրա միջոցով դիտարկենք պատմականորեն կուտակված և սերունդներին փոխանցվող տեղեկատվությունը անվտանգության քաղաքականության մասին, որի օգնությամբ հնարավոր է բնականոն կերպով արդիականացնել ազգային շահերի քաղաքական էությունը:

Այս մոտեցումը անհրաժեշտ է անվտանգության քաղաքականության արժեքային կերպափոխումը որպես տեղեկատվահաղորդակցական գործընթաց ընդունելու համար: Այստեղ տեսական և գործնական առումներով հիմք ենք ընդունել ամերիկացի քաղաքագետ Կ. Դոյչի՝ հասարակության քաղաքական համակարգերի գործառման «կիրեննետիկական-հաղորդակցական ձևաչափը»<sup>14</sup>: Դրա շրջանակներում անվտանգության քաղաքականության գործընթացի ուսումնասիրությունը թելադրված է տեխնիկական, կենսաբանական, մարդաբանական, սոցիալական և տնտեսական համակարգերում կառավարման դերակատարների միջև ցանցային հետադարձ կապերի բացահայտմամբ, որոնք իրենց ներազդեցության յուրաքանչյուր հաջորդ փորձի մեջ նպատակադիր գործունեության նախկին փորձի մասին տեղեկատվություններ են ներառում: Ինչպես նշում է Ն. Վիները, «...այս տեսության շրջանակներում մի գործընթացի վերլուծության արդյունքները տեսական և կիրառական առումներով կարող են մեծ կարևորություն ունենալ մեկ այլ գործընթացի և երևույթի ուսումնասիրության համար»<sup>15</sup>:

Կ. Դոյչի կիրեննետիկական-հաղորդակցական մոդելը ևս կառուցված է հետադարձ կապի սկզբունքով: Փաստորեն Կ. Դոյչը քաղաքական համակարգի ամբողջական անվտանգ գործառնությունը պայմանավորում է քաղաքական կյանքի մասնակիցների միջև տեղեկատվության մշտական փոխանակմամբ: Որպես քաղաքական հաղորդակցություններ՝ Կ. Դոյչը կարևորում է հատկապես կառավարողների և կառավարվողների միջև ընթացող տեղեկատվական փոխանակությունը՝ ուղղված այդ կողմերի շահերի համաձայնության ճշգրտմանը<sup>16</sup> և իրականացմանը: Տեղեկատվահաղորդակցական հոսքերի տեղաշարժման փուլային հաջորդականությամբ պայմանավորված՝ վերջինս առանձնացնում է չորս հիմնական ոլորտ. տեղեկատվության ընդունում և ընտրություն, տեղեկատվության

<sup>13</sup> Эбелинг В., Энгель А. Физика процессов эволюции, М., 2001, с. 258.

<sup>14</sup> Deutsch K. W. The Nerves of Government: Models of Political Communication and Control, London, 1963, p. 316.

<sup>15</sup> Винер Н. Акционерное общество “Бог и Голем”: обсуждение некоторых проблем, в которых кибернетика сталкивается с религией (Винер Н. Человек управляющий, СПб., 2001, с. 220).

<sup>16</sup> Мухаев Р. Т. Теория политики, М., 2005, с. 146.

վերամշակում և գնահատում, որոշումների կայացում, ընդունված որոշումների իրականացում:

Համաձայնելով Կ. Դոյչի նման մոտեցմանը և նկատի առնելով անվտանգության քաղաքականության ապահովման դասական ու ժամանակակից փորձը՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է հաշվի առնել բիզնես-պետություն փոխազդեցություններում առկա տեղեկատվական հոսքերի շրջանառության ինստիտուցիոնալացման մակարդակը: Դրա ուղղվածությունը, ծավալը, շարժունակությունը և շերտավորվածությունը պետք է որ պայմանավորված լինեն ոչ թե փոխհամաձայնեցված խմբիչխանական, այլ ազգային և հանրային շահերի արդիականացման և զարգացման ընդունակությամբ:

Շահերի նմանօրինակ գեներացիան խթանում է քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացման և կայացման գործընթացը: Այդ առումով հատկանշական է գերմանացի սոցիոլոգ Ն. Լումանի «շահերի համաձայնեցման տեսությունը»: Ն. Լումանը առաջարկեց սոցիալական իշխանության իր հայեցակարգը՝ որպես հանրային կառուցվածքների, շահերի, նորմերի, արժեքների և խորհրդանիշների առաջացման միջոց: Ըստ այդմ՝ «սոցիալական իշխանության մոդելը բաղկացած է երկու տարրից՝

- սոցիալական սպասումների միավորմանը տանող հասարակական կառուցվածքների, շահերի, նորմերի, արժեքների և բառերի խորհրդանշանային ընդհանրացում:

- որոշակի գործողությունների օրինակների հիման վրա քաղաքական գործիչների կամ կառավարող խավի վարքի ռեդուկցիա:

Ըստ Լումանի՝ այս երկու տարրերի ամբողջությունը ձևավորում է արժեքային-գործիքային ծածկագիր, որն ուղղված է սոցիալական վարքի կարգավորմանը անվտանգության քաղաքականության ապահովման միջոցով: Ակնհայտ է, որ քննարկվող տիրույթներում տեղի է ունենում սոցիալական պատկերացումների խորհրդանշանային ընդհանրացում, որը բարձրացնում է պետական և քաղաքացիական հասարակության ինստիտուտների փոխներգործության մակարդակը՝ հանուն անվտանգության ապահովման: Այս նկատառումները հիմք ընդունելով՝ կարևորենք շահերի խմբերի դերը ազգային շահերի արդիականացման գործընթացում:

Պյուրայիզմի (բազմակարծության) տեսության ներկայացուցիչ, քաղաքագետ Է. Ֆրենկելը դեռևս 1950-ական թթ. բանավիճում էր Կ. Շմիդտի հետ, ըստ որի՝ միայն պետությունը և նրա ղեկավարներն են ընդունակ գիտակցել համընդհանուր բարեկեցությունը և իրականացնել անվտանգության քաղաքականություն, իսկ շահերի խմբերը պարզապես վտանգավոր են, քանի որ ներկայացնում են առանձին պահանջներ: Չընդունելով այն կարծիքը, որ «ժողովրդի միասնական կամքը» խախտում է ազատության սկզբունքը, դրան հակադրում էր խորհրդարանական-պյուրայիստական ժողովրդավարության գաղափարը, որ բխում էր շահերի

տարբերության չափանիշներից և դրանց փոխզիջումային համատեղության անհրաժեշտությունից: Է. Ֆրենկելը կարծում էր նաև, որ ոչինչ՝ նույնիսկ պետությունը չի կարող միանշանակ հավակնել ընդհանուր բարեկեցություն ձևավորելու իրավունքին: Այստեղից էլ քաղաքագետը հետևություն է անում, որ բարեկեցությունը ազգային շահերի փոխգործողության և հավասարակշռվածության արդյունք է<sup>17</sup>:

Ելնելով ժամանակակից շահերի խմբերի բազմատեսակությունից՝ մեր կարծիքով, ավելի հեշտ է դրանց խմբավորել այսպես կոչված հակադրվող գույգերի միջոցով՝ նյութական-հոգևոր, հասարակական-մասնավոր, ձևական-ոչ ձևական և այլն: Առաջարկված դասակարգման օգնությամբ կարելի է առանձնացնել ազգային անվտանգության ապահովման սոցիալ-քաղաքական ակտիվության հինգ հիմնական ոլորտներ.

1) կազմակերպված ազգային շահեր տնտեսությունում. աշխատողների ինքնուրույն միավորումներ և արհմիություններ, սպառողական միություններ.

2) շահերի խմբեր սոցիալական ոլորտում. սոցիալական իրավունքները պաշտպանող միավորումներ (ինչպես կույրերի միավորումները), սոցիալական նվաճումների միավորումներ (օրինակ՝ բարեգործական հիմնադրամները), ինքնօգնության խմբեր (թմրամոլությանը, թրաֆիքինգին դիմակայող և այլն).

3) շահերի խմբեր ազատ ժամանակի տնօրինման բնագավառում. մարզամշակութային միություններ, շփման և սիրած զբաղմունքի ակումբներ.

4) կազմակերպված շահեր կրոնի, գիտության և մշակույթի ոլորտներում. եկեղեցիներ, աղանդներ, գիտական ասոցիացիաներ, հանրակրթական խմբակներ և արվեստի գծով ակումբներ.

5) շահերի խումբ՝ ըստ հասարակական-քաղաքական գործունեության. հոգևոր, էթիկայի, իրավապաշտպան ասոցիացիաներ, հասարակական-քաղաքական միավորումներ՝ բնապահպանական, ֆեմինիստական, զլոբալ (նաև հակազլոբալիստական) քաղաքացիական նախաձեռնություններ լուսաբանող ազատ և անկախ ՁԼՄ-ի գործառնամբ:

Որպես քաղաքական համակարգի հաղորդակցական ենթահամակարգի գերակա ինստիտուտ՝ ՁԼՄ-ն առաջնային նշանակության ունի ինչպես հասարակության կյանքի մակարդակի և պլյուրալիստական, ժողովրդավարական քաղաքական համակարգի կայուն զարգացման, այնպես էլ ազգային անվտանգության ապահովման գործում:

Ըստ էության՝ որպեսզի ազգային շահերի արդիականացումը իրապես ազդի անվտանգության քաղաքականության ապահովման համար ընդունված քաղաքական որոշումների գործընթացի վրա և կանխորոշի քաղաքական զարգացման հիմնական ուղղությունները, անհրաժեշտ է կանխատեսել զլոբալ

<sup>17</sup> Пшизова С. Н. Какую партийную систему воспринимает наше общество? (Полис, 1998, N 4, с. 105).



զարգացման տրամաբանությունը և կազմել սոցիալ-քաղաքական այլընտրանքների առաջնահերթությունների ցանկ: Այս առաջարկը հատկապես արդյունավետ կարելի է կիրառել անցումից դեպի համախմբում գործընթացում գտնվող հասարակությունների համար: Սա էլ հնարավորություն կտա բացահայտելու, ուղղորդելու և կանխելու հաճախ անկայունության հանգեցնող անհանդուրժողականությունը: Ազգային շահերի և պահանջների բնականոն արդիականացումից է կախված դրանք ներկայացնող ճնշման խմբերի՝ պետության քաղաքականության վրա իրական ազդեցություն գործելու ընդունակությունը:

Անփոփելիով նշենք, որ անվտանգության քաղաքականության ապահովման համատեքստում ազգային շահերի արդիականացման համար սպառնալիք են աններդաշնակ տեղեկատվահաղորդակցական հոսքերը: Այս իրավիճակի շարունակականությունը հասարակական գիտակցության մեջ տրոհելով կոլեկտիվ պատկերացումները ազգային շահերի արդիականացման վերաբերյալ, անվտանգության քաղաքականության ապահովման գործընթացում գերակա կդարձնի զգայականը: Ընդ որում, այդպիսի պատկերացումները ոչ միշտ կարող են համատեղելի լինել տվյալ ազգի՝ անցյալից ժառանգած տեղեկատվության՝ կենսական նշանակություն ունեցող տարրերի հետ: Մինչդեռ նոր քաղաքական ժամանակի մեջ ազգային շահերի արդիականացումը անվտանգության քաղաքականության ապահովման գործընթացում ենթադրում է բանականի և զգայականի ներդաշնակեցում՝ զարգացնելով համագործակցային անվտանգության մշակույթը:

**МОДЕРНИЗАЦИЯ НАЦИОНАЛЬНЫХ ИНТЕРЕСОВ  
В ПРОЦЕССЕ ОБЕСПЕЧЕНИЯ ПОЛИТИКИ БЕЗОПАСНОСТИ РА**

МАРГАРЯН М. Г.

**Резюме**

Исходя из базовых ценностей стратегии национальной безопасности РА (Указ. Президента РА, 2007, 7 февраля), модернизационный процесс национальных интересов следует рассматривать в качестве многовекторного явления. В целях модернизации политики стабильности необходимо конвергировать национальные и государственные интересы, что даст возможность артикулировать и генерировать национальные интересы в контексте цивилизационных социоэтнических ценностей. Апеллирование к кибернетическому методу К. Дейча, рассматривающего информационно-коммуникационную систему как основу конвергенции, консолидации групповых интересов, позволяет расширить траекторию национального «я» как информационно-коммуникационной системы.